



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թի 1559
Դեկտեմբեր 10, 1993

Հոգեշնորհ
Տ. Վահան Արղ. Յովհաննէսեան
Հովի Սրբոց Ղեռնդեանց Եկեղեցոյ
Ֆերմն.

Սիրելի Հայր Վահան,

Սրբոց Վարդանանց տօնին առթի՛ Երեքշաբթի Փետրուար 10-ի (1994) երեկոյեան Առաջնորդարանիս Հայկ եւ Ալիս Գալուքեան հանդիսասարահին մէջ տեղի պիտի ունենայ մասնաւոր ճաշկերոյթ եւ պիտի գործադրուի օրուան պատշաճ յայտագիր մը:

Ցայտագիրին իր մասնակցութիւնը պիտի բերէ Ա. Վարդան Մայր Տաճարի եւ շրջանի Հայ Եկեղեցիներու դպրաց դասերու անդամներէն կազմուած երգչախումբը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէլիսանէճեանի:

Այս գրութեամբ կը հրաւիրենք Եկեղեցոյդ դպրաց դասի անդամները՝ որպէս զի իրենց մասնակցութիւնը բերեն մեր ազգային այս գլխաւոր տօնի յիշատակումին: Խմբավար Խորէն Մէլիսանէճեան պատրաստ է Յունուար ամսուան ընթացքին այցելել ձեր համայնքը եւ կատարել փորձերը դպրաց դասի անդամներուն հետ:

Բարի եղէք Եկեղեցոյդ դպրապետին տեղեկացնել այս նպարագան եւ փորձերու համար ընտրել այն օրերը՝ որոնք յարմար են բոլորին: Տրաւ Մէլիսանէճեան ձեզի հետ հաղորդակցութեան մէջ պիտի մտնէ՝ ընելու համար անհրաժեշտ կարգադրութիւնները:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ